ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2026թվականի N 2-Ա

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքում սկսել 2026թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:
2. Ճամբարակ համայնքի 2026թ-ի բյուջեում հատկացնել 30.000.000 /երեսուն միլիոն/ ՀՀ դրամ գումար՝ 2026թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 10.000.000 /տասը միլիոն/ ՀՀ դրամ:
4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևանմուշը՝ համաձայն հավելվածի:
5. Սահմանել առաջարկ-նախագծերի օգտին ստացված քվեների նվազագույն տոկոսային շեմեր, որոնք հաշվարկվում են քվեարկելու իրավունք ունեցող համայնքի բնակչության թվի նկատմամբ.
   1) մեկ տոկոս՝ եթե առաջարկ-նախագիծը նախատեսվում է իրականացնել համայնքի կազմում ընդգրկված մինչև 5000 բնակիչ ունեցող բնակավայրում (բնակավայրերում).
   2) երկու տոկոս՝ եթե առաջարկ-նախագիծը նախատեսվում է իրականացնել համայնքի կազմում ընդգրկված 5000-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրում (բնակավայրերում):
6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանել ենթակառուցվածքների զարգացման ոլորտը(ները) (կամ տարածքը)՝ որպես առաջնահերթություն:

7. Համայնքի ղեկավարին՝
   1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2026թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում,
   2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն,
   3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՕՀԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ
ՃԱՂԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՆՈՒՇ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ՇՈՒՇԱՆՅԱՆ ՇԱՀՆՈՒՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՒՐԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎՐԵԺ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԶԱՏ
ՋԱՌԱՀՅԱՆ ՍԵՎԱԿ
ՆԱԴԱՐՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԻԳԵՆ
ՋԱՀԱՆԳԻՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026 թ. փետրվարի 06
ք. Ճամբարակ